ալէտ քաղաքնայն ասի Թողուլ, բայց պաշտօնէաբար, և ոչ հեղինակութեամբ։ Որդ՝ ասացաւ, թէ սքանչելիքն լինին 'ի վկայութիւն հաւատոյ. որպէս յԱռաքելութեանցն Ե մասին Ե գլուխ ասի, թէ յայլ կրօնս ոչ եղեն գործք սքանչելեաց, բայց միայն 'ի մի հաւատ Կաթուղիկէ. և յսկսանի Կաթուղիկէ հաւատոյ՝ սկսան և սքանչելիքն և վկայութիւնք. զի 'ի վերայ պատարագին Աբելի եղև վկայութիւն, զի սքանչելապէս էջ հուր յերկնից և ծախեաց։ Իսկ յազգն եբրայեցւոց բազմացան սքանչելիք ելանելոյն յեգիպտոսէ մինչև 'ի մուտս նոցա երկրին աւետեաց. և սքանչելիքս այսորիկ էին այնպիսիք, որք միայն Աստուծոյ պատշաճէին. որպէս ոտնակոխել զարեգակն և զլուսինն հրամանաւ Յեսուայ։ Նաև անդրադարձին արեգական առ Եզեկիայիւ։ Այսպէս և արեգական յաւուրս չարչարանացն Քրիստոսի, զոր աթենացւոց փիլիսոփայքն չկարելով գտանել զպատճառ խաւարմանն այնմիկ. ասացին թէ՝ չարչարի Աստուածն բնութեան։ Այլ դադարեցան սքանչելիքն այնորիկ առ հրէայս, վասն գթելոյ նոցա առ վիմին գայթակղութեան. և ոչ հաւատալովն Աւետարանին Քրիստոսի։ Իսկ Քրիստոս իբրև նախապետական պատճառ և հեղինակ սքանչելեաց, արար զանթիւ հրաշս. զորմէ գրէ Աւետարանիչն, թէ բազում և այլ ինչ արար Յիսուս առաջի աշակերտաց, որ ոչ է գրեալ 'ի գիրս այս. որ թէ գրեալք էին, նոյն ոչ կարէր տանել։ Եւ գլուխ սքանչելեացն էր՝ զի Աստուած լինէր մարդ. Այսպէս մնայր կոյս. և մարդկային միտք հաւատայր զայսոսիկ։ Նաև Քրիստոս յարոյց զմեռեալս՝ և զինքն ևս. ըստ այնմ, իշխանութիւն ունիմ դնել զանձն իմ և առնուլ. որ եթէ սոսկ մարդ էր Քրիստոս, յորժամ բաժանեցաւ հոգին 'ի մարմնոյն՝ ոչ էր մարդ. և ո՞վ էր որ ասաց, թէ միւսանգամ առնում զնա՝ և էառ. ապա ուրեմն ոչ միայն մարդ էր, այլ և Աստուած։ Դարձեալ՝ յանունն Յիսուսի կոյրք լուսաւորեցան, խուլք լուան, մեռեալք յարեան. որ թէ Քրիստոս ոչ իցէր Աստուած, ոչ լինէին այնպիսի սքանչելիք յանուն նորա։ Ուրեմն թէ սքանչելիքն լինէին 'ի վկայութիւն հաւատոյ՝ և ոչ պակասեցան սքանչելիք 'ի Կաթուղիկէ Եկեղեցւոջ. յայտ է թէ արարեալ սքանչելիքն որ Լուսաւորչին մերոյ և սրբոյն Արիստակիսի 'ի Նիկիայ. և մեծին Սերսիսի առ Աղեսիւ. և Շնորհալւոյն առ այլքս կայսերբ. և Լամբրոնացւոյն զկնի ժողովյն

հորրորդի. և մանաւանդ՝ նախ քան զնոսա սրբոյս Գրիգորի Նարեկացւոյ էին ճշմարտապէս դաշակիցք և ծանուցիչք Կաթուղիկէ հաւատոյ հայաստանեայս Եկեղեցւոյ. որև սուրբս Գրիգոր առ 'ի ծանուցանել թէ ոչ ունէր զծայթ հաւատ. այլ համաձայն Եկեղեցւոյն Հռոմայ. զխորովեալ աղաւնին՝ միայն բանիւ յարուցեալ թռուցանէր. և զերկանաքարիւ ձմլեցեալ զհացն ձագերովն զկնի երանական նշխարին՝ տապան նոր կենդանացուցանէր։ Իսկ սքանչելիքն սքանչելեաց էր՝ զի Քրիստոսն հանդերձ մարմնովն նորա տեսանելն դէմ յանդիման։ Զի՞նչ ասելի է և զսքանչելի աղօթական գրքոյս գիտահալածի։ Արդ արև ոչ միայն գիրք նորա, այլ և անունն եւս դիւաց զարհուրելի։ Աղեկեայ քաղաքայի որդիքն, յանունն Յիսուսի զոր Պօղոս քարոզէր՝ զդևս հանէին. որ մինն 'ի դիւաց ասաց՝ զՅիսուս գիտեմ և զՊօղոս ճանաչեմ, և դուք ո՞վ էք։ Թուի թէ և նոյն դևանս մինչ ոմանք կամին զդևս հալածել անուամբ սրբոյն Գրիգորի. զնոյնն կարեն ասել, թէ զՅիսուս գիտեմ և զԳրիգորիոս Նարեկացին ճանաչեմ, բայց դուք ո՞վ էք։ Վասնզի ըստ Աւետարանին՝ երկուց պէտք են առ 'ի բժշկութիւն. բժշկելոյն հաւատոյն՝ և բժշկողին կարողութիւն։ Իսկ ցարդ ևս ոչ պակասին սքանչելի բժշկարարութիւնք յանուն նորա՝ կենդանի ոսկերացն։ Զի թէ ոսկերքն Եղիսէոսի զմեռեալն կենդանացուցին 'ի հնումն, ոսկերք սրբոյն Գրիգորի ո՞րչ ոչ կարէին զհաւատն ձագերովն կենդանացուցանել։ Իսկ արտաքոյ գրեցելոցս՝ պատմին և այլ սքանչելիք եղեալ 'ի սրբոյս Գրիգորէ. քանզի յորժամ իբրև զծայթ՝ կամէին ոմանք 'ի նախանձոտաց նսեմացուցանել զպայծառ անունն նորա, յղեցին զոմանս 'ի կոչել զնա առ պատասխանատուութիւն. և գիտաց ասի մինչ արածէր զոչխարս. և 'ի կոչելն զնա, գայլ ոմն կալով 'ի հեռուստ՝ սպասէր հեռացման նորին. և նա կոչեաց զնա՝ եդ պահապան ոչխարացն, պատուէրելով մի ինչ վնասել մինչև 'ի դառնալն իւր. և գնացեալ ընդ կոչողսն, յարուց մամբ աղաւնեացն ստուգեաց զանխախալութիւն հաւատոյն իւրոյ. և դարձեալ անդրէն եգիտ զգայլն հաւատարիմ 'ի պահպանութեան իւրում. վասն որոյ շնորհեաց նմա զգառն մի և արձակեաց։ Իսկ եբղխեցուցեալ աղբիւրն (մերձ այրին յորում յաղօթելն եւես զՔրիստոս հանդերձ մայրն) դեռևս կայ ասի և ա-

նէ

նէ ոչ սակաւ նշանս, իբրև զաղբիւրն սեղովմայ ։ Իսկ և զմահուանէն՝ յաւանդութէ պատմի այսպիսի ինչ. թէ 'ի գիւղն իւր Լարեկ՝ կայր իշխան ոմն Գոորգ անուն, որ յաճախ կիւրակէից գործեր եգործել տայր ծառայիցն իւրոց. և յորժ լսեր հրամանի սրբոյ՝ սրբն Գրիգոր անէծ զնա. և զկնի երից աւուրց պատժի իշխանն մահուամբ, և ոչ գտաւ արի 'ի տապանի. վն որոյ գատաւորի գիւղին գանկատեալ. և նա զսրբն կալաւ ասի 'ի շղթայս. և յաճախ երիս աղօթս արարեալ՝ հալեցան շղթայքն և լուծաւ սրբն. և յորում տեղւոջ զշղթայսն կախեցին, բղխեալ ասի աղբիւր, և կայ մինչև ցայժմ. և շղթայքն եւս ասի առնել զհրաշս ։ զկնի այսմ սրբն Գրիգոր արժանապէս զՔսի պատարագել օրն է պահղովութն. և զի սովորուի ունէր ասի յաճախ պատրագելոյն ոչ ելանել արտաքս յեկեղեցւոյն՝ այլ հսկել. վն որոյ զաճախ ելս անյայտ եղեալ 'ի մարդկանէ, և եկեալ 'ի տեղի աղօթիցն ոչ գտին զնա. ուստի աղօթիւք և պահօք խնդրեցին յԱծ յայտնել զիրն ճշմարտութն. և յայտնեցաւ 'ի հրեշտակէ Ան՝ ննջեալն սրբյ հրշտկական Վարդապետին առ Աջ երանելի մահուամբ որոյ տապանն մերձ սրբոյ հօրն կուսին Մանգխտոյ՝ մինչև ցայսօր առնէ ոչ սակաւ հրաշս առ իւր ջերմեռանդս ։ Ահա այս վերջին գերազանցութիս սրբյն Գրիգորի է, զիցի կնիք և հաստատութի առաջնոցն նորին գերազանցութեց, իբր պսակ 'ի վր պսակի ։ և աղօթք նր ներգործեսցէ և զայս եւս հրաշ յերեկոյացեալս ժամու, զի տկար սրտօք և զբաղեալ խորհրդով, կարասցուք յաճախ հասանի մեկնութն բանից նր, Ամէն։

Պատճառ Մեկնութե, աղօթական և ներբողական Գրչոյ սրբյն Գրիգորի Նարեկացւոյ։

Արդ՝ քանզի մտաբերելով մեր, թէ ներքին գեղեցկութիւք բանից սրբյ Վարդապետիս, բաւիւք՝ իբր ամփոփք թաքուցեալք էին. վն այնորիկ ջանացաք ձեռնարկել առ 'ի զբաւսն լուծանել. և մինչ ժամանեալ եմք 'ի գլուխն ԿԵ, և զոմանս 'ի բանիցն եւս մեկնեալք. տեսեալ զայնս սիրելի եղբայր մեր հռոմ կլայեցի Պետրոս Ահարոն վարդապետն ոչ սակաւ համարելով զպարապմունս մեր՝ և զհոգս ուղիղ եկեղեցւոյ՝ և ազգիս՝ սկսաւ թախանձել զմեզ և աղաչել, թէ զբոլորն այսպէս առնել աղերսեաց հոգի Վարդապետս. և մեք վիճել 'ի խնդիր նր բաց առնել չկարացաք. վն որոյ մոռանալով զտկարութն մեր, յայնմ տեղւոջէ սկսաք 'ի վր ամ նշանաւոր բանիցն առնել զմեկնութիս մինչև 'ի վերջն. և 'ի յսկզբէն վերստին սկսեալ հասուցաք մինչև ցանդր։ Իսկ զկնի գնալոյ նր յայցելութն տեսչութե Կլանոյ քաղաքին, որ առ սակաւ սակաւ յըզբաղմանց կառավարութե ազգիս՝ սկսաք թուլանալ. և զկնի իբր թէ յերկրորդ խթանե ընդոստուցեալ, 'ի հոգեկից և 'ի մեծարգոյ գերազնիւ եղբօրէ մերմէ 'ի Յարութիւն Ահարոն Վարդապետէն առաւել քան զնորայն յորդորումն. նաև շմից գլխոց բոլոր զխոստովանութեցն համառօտութի առնել հարկեցեալ, վերստին հարկաւորեցաք 'ի մտանել զպարապմունս մեր. և 'ի ժամանակի՝ իբր զժամանակ և զպահս գողանալով, 'ի մէջ երկուց ամաց աւարտեցաք զսա 'ի փառս Այ, և 'ի պատիւ հրեշտակական Վարդապետին, 'ի պարտահատուցումն մեր, և ի յօգուտ ընթերցողաց. և 'ի պս[illegible] մեր զդժուարութն ծախից տպեցմանն, սիրահարեալն մերս տգեղութե, գեղեցիկ և հեզահոգի եղբայրն իմ եւս խոնարհութե յանձնառուն՝ Նոճաստ մերոյս փոխանորդութե, Յարութն Ահարոն Վարդապետ պաշտօնակիցն իմ. նաև սիրով սրբյն Գրիգորի խոցեցեալն, յանձն էառ արդեամբք իւրով տպել տալոյ. և զխոստումն իւր կատարելով արդար վաստակօք իւրովք արար զտպումն սորա յիշատակ ինքեան, հայցելով յԱծ թերցողացդ զյի բերանով ողորմին. այլ քանզի ձեռնարկութիս այս՝ 'ի վեր էր քան զկար մեր. թէ վն խրթին և գաղտնի մտաց սրբյ Վարդապետին. որոյ բանից մեկնողն՝ իբր նման հոգեւորց այր պարտ էր լինել. և թէ վն տաժանելի զբաղմանց մերոց. և թէ ըստ որում ամանք մասնաւորաբար արարեալք էին ։ սակայն մեք ոչ թէ չհաւանելով լուծմանցն առաջնոց. այլ մանաւանդ զի երին 'ի նոցանէ լուսացանել կամելով. որ թէ ոՑք էին նախ քան զմեզ առայն ձեռնարկողք, տեսցես 'ի մեկնութե խոբագրի գրքիս ։ Այլ և 'ի միտս իմ բանն Տրունական, որ առ քանքարաթաքոյց ծառայն. և երկնչելով 'ի յանդիմանութեն Տն որ առ նա. նկատելով և 'ի համալսարան երանելի նախնեաց իմոց, կենդանի հօր իմոյ և Տն, Տն Գրիգորի սրբյ Եփրեմի գերազ

նին Պատրիարքի և համանմանոյ վարուք մեծին Գրիգորի (որ և ըստ անուանն) Լ.ր թեան անուան հսկողի, և Տաճարանուէն մեծի վարդապետի. և առ Տէր կենդանացեալ սրբազան Ս. արժանապետին իմոյ՝ և հոգևոր հօր. Տն Յովհաննու Պօլսոյ Եկեղեցասէր, և Ս. կայսէր Տէրունական իշխանի: որոց բարերարութեանն որ առ մեզ անսպառնելի հոգւոյ. չկարելով զփոխարէնն այլով իմիք հատուցանել, զայս և եթ (և թէ Տէր տացէ զժամանակ՝ և զայլս մատուցեալս ՚ի մենջ առնել) համարեցաք ՚ի յայգւոյ խուրեանց մի մի ողկուզակ շնորհել նոցա, իբրև զերախայրիս այգւոյն: որ զի ով որ ընթեռնուք նոցունք ՚իմանէ, թէ արժանաւոր հիցեն բանք մեր բանից մերոյն Գրիգորի. սակայն զկենդանի և զննջեցեալ հարքն իմ յիշեցէք յաղօթս ձեր. զի թերևս կենդանեացն երկար կեանս, և ննջեցելոյն զվեր երանական տեսութեանն շնորհեսցէ Տէր։

Յիշել աղաչեմ և զհօրն մեր երանելի, զՄարդան մեծ Մարդապետն Լմրտօլոյ դպրատանն։ և զիմ հոգևոր եղբարսն իմ ՚ի Քս. և զաշակերտեալ մանկունս մեր, և զիմ իշխանս բարեպաշտօնս ազգին մերոյ որք իբրև զորդիս (թէ և իցեմք նարդեանս ՚ի տեղի հօր) ՚իմանկութենէ մինչ ցարդ ՚ի խնամս իւրեանց զմեզ ոչ են դադարեալք. և աներկբայօրէն յուսամք ոչ դադարել մինչև յերանական կոչումն իւրեանց։ Սոյնքն և զայս ով ջերմեռանդ ընթերցողք. զի ՚ի մէջ Պօլսոյ՝ մեք և բազում վկայութիւն ՚ի Յունաց և ՚ի Լատինացւոց գրեանց Աստուատեհլին առեալ եմք, մի ոք ՚ի տեսանելոյ խորոտիցի. զի զոմանս առեալ եմք ընդունելով, որք ոչ են ընդդէմ հաւատոյ և բարի գործոց։ և զոմանս իբրև ՚ի հաստատութիւն Ճշմարիտ դաւանութեան Հայաստանեայցս եկեղեցւոյ. որպէս զի և նոցայոյն գրեանք հաստատեսցի Ճշմարտութիւն մեր Եկեղեցւոյս Հայոց։ Բանքն և մերն Գրիգոր Տաթևացի զբազում բանս յանուանէ առեալ է ՚ի Լատինացւոց գրեանց, և յայլմէ անուանէ զբազում քարոզս ՚ի քարոզագրքէ Բարթուղիմէոսի Մարաղոյ Եպիսկոպոսի, համարեսցի և մերն ըստ այնմ կերպի։ գտանին ասոյն և բանք քարոզակերպք, աղաչեմ մի ձանձրանալ յընթեռնուլն։ գտանին և համառօտք, և մի իբրև անկատարք քամահեսցին։ զի բազումք գտանին՝ որք կամին ՚ի վերայ երկարին սակաւ բան, և ՚ի վերայ համառօտին երկար։ և որպէս կարելի էր ըստ ամենեցուն կամաց մարդավարեալ։ վասն որոյ ըստ կարեաց մերոց արարեալ զայս փոխարէն, խնդրեմ զաղօթս յամէնց ընթերցողացդ առ Տէր աղաչելով բարեաց առաքել. զի թերևս աղօթիւք սրբոյն Գրիգորի. և ձերդ, թողցէ Տէր իւր ամենակարող զօրութեամբն զմեղս իմ ՚ի կեանս այս. և զկեանս սոսի կենացս՝ յընտրելոցն օթևանին զկետեղումն իմ յարքայութեան իւրում, հանդերձ եղբարբք իմով՝ տպել տուողին Գրքոյս. և տպագրատանն վերակացուին հոգեւորին որդեկան իմով, նորաբողբոջ Պօղոս վարդապետին, ողջախոհ տատրական. որ շարողաց զկազմարեայն և զայլ սոյն կարգադրելոյն, գրեթէ անդր քան ըզ կարն իւր աշխատեցաւ. և այլովք աշակերտօք մերովք. նաև մարմնաւոր ծնողացն իմոյ ՚ի Յաւ օղլի կոչեցեալ Մահտեսի Պօղոսին և Մահտեսի Մամամին, Ամէն։

✻ Նուաստ ծառայ ծառայիցն Քի. ✻
Յովհաննէս Վ.րդ Բաղիշեցի, և
Պատրիարք Կոստանդնուպօլսոյ

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՆԱԽԵՐԳԱՆԻ

ԲՈԼՈՐԻ ՍՈՒՐԲ ԳՐՔՈՑՍ·

ԱԽ ՔՆՆԵԼԻ ԶԽՈՐԱԳԻՐ ԱՌԱՋԻ

կայ գրքոյս, թէ ուրն իցէ՝ թէ յայլմէ։ Քանզի յայլ և այլ գրուածս առաւելեալ է նոյն այլ գտի զխորագիրս։ Եւ երևի թէ, ոչ իցէ ուրն. քանզի՝ թէ իւր ասացեալ էր նորա, ոչ անհեղլացուցանէին, և ոչ փոփոխաւեցուցանէին գրագիրք։ Նա և՝ զի ասացեն գրեցեալ է, Սրբոյն Գրիգորի Սուրբինոյ [illegible]. և ճգնաւոր հոգւոյն· Որով ցուցանի թէ՝ ոչ է ուրն. այլ՝ թէ ումն իցէ. և կամ թէ ուրն ոչ քան իցէ, ասել է թէ, կարելի է ասել, թէ զխորագրեալսն այլք ոմանք վն պատճառաց մարդասպանին ներմուծեալք են. և այլք մնացեալքն ուրն են, որք և ամենից գլխոց կարեն լինել խորագիրք։ սակայն ասեմ թէ, միայն ուրն է այսքան։ Ի խորոց սրտից. խօսք ընդ Այ։ Իսկ այլք մնացեալքն են պատմութեան նորին գրողի՝ Գրիգորի Սկևռացւոյն։ Քանզի գտի զնարեկ մի ՌՃԴ թուին գրեալ՝ ՚ի վերայ մագաղաթի. որոյ թուին գրեցման լինէր՝ ՉԽԶ ամաց. և անուանոր գտի շարագրեալ զպատմութիւն Սրբոյս Գրիգորի Նարեկացւոյ՝ ՚ի Գրիգորէ Սկևռացւոյ. ՚ի վերակացութեն Սկևռայ վանից, Ներսէսի Տեառն Եպիսկոպոսի։ որ և զ կնքի պատմութենն անմիջապէս հետևեալ խորագիր առաջնոյ գլխոյս՝ այսպէս։

[illegible]

[illegible] ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ։

Մինչ ցայս վայր՝ անուանոր խորագիր Սրբոյ Մատենիս։ Որդ՝ թէպէտ բանք Սրբյս գրեգորի պարունակեն՝ զորս ՚ի սոյն խորագրի բայց զի՝ հոգեմատեան հաւասար ասելն՝ և Հայոց փիլիսոփայ. և որ ՚ի տպեցեալ Նարեկի սկզբանն (Սրբոյն Գրիգորի) ասանելին նորին խոնարհութեն ոչ վայելեն. այլ կամ ներսամտեալք են ՚ի պատճառ սորին, և կամ յայլմէ. որպէս և ասացի ՚ի Գրիգորէ Սկևռացւոյն շարագրեալք։ քանզի՝ թէ իւր Սրբյն Գրիգորի լինէր արարեալ. թերևս լուծող բանից նորին Սարգիս Շնորհալին տայր զմեկնութիւն ինչ այնքան նիւթոց որ բանիցն. որպէս և արարեալն է յսկիզբն մեկնութեն Կաթուղիկէիցն՝ կարի յաճախ՝ և զանազան է լանակաւ։ Սա և մի լուծողացն սոյն գրքոյս՝ գիտելի է։ զի զառաջին երկար լուծմունսն (որպէս և ասացաւ) արարեալ է Սարգիս Շնորհալին, մեկնիչն կաթուղիկէից թղթոցն։ Իսկ որ համառօտն է՝ սպեցեալ ՚ի վախճանին, թուի ինձ թէ, զայն արարեալ իցէ Ոսկան վարդապետն սիւնեցի. աշակերտ Գրիգորի Տաթևացւոյն. որ հետևեալ շաղաց իւրոյ վարդապետին, զերկար գրեցեալսն այլոց, համառօտել է. որ եթէ և ինքն զայլ ինչ արարեալ իցէր այլ ևս լաւագոյն լինէր. բայց թէ անկարութեն արգել, ոչ գիտեմ։ սակայն՝ որպէս շարախող շարադրութեն ցուցանէ, երևի թէ Տաթևացւոյն իցէ, քան թէ Ոսկան վարդապետին։ Լուեալ եմ թէ և Սբն Ներսէս Լամբրոնացին ևս արարել է լուծումն սոյն Սբյ մատենիս. թէպէտ ես ոչ եմ առ դիպեալ. զի թէ տեսեալ լինէի զնորայն. կամ զանց առնէի ՚ի կրկին աշխատանաց. և կամ օգնել ՚ինմանէ դիւրաւ ընթանայի ՚ի շաւիղ բանից Սրբոյս։

ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉՆ ՍՐԲԻ,

ՈՐՈՑ ԳԻՐՔՆ Ի ՀՈՑՆ ՍՏԵՓԱՆԻՆ Է ։

զծառգան յարոյց ։ զաղաւնին յարոյց ։ զաշակերտաց զարժէ ։ զդիւահարն բժշկէ ։

1748. *Mosconus.* *fe:*

Costantinopolem

Ջեռաւ սիրտ իմ ՚ի ներ
քս իմում․ և՚ի խոր
հուրդս իմ վառեա
ցաւ հուր։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ։

Գ Սոյն գլխոյ ընդհանրապէս, շնորհազարդն իւր համեմատէ ըստ որում եւ խնդրոյն խորաչքէ եւ դասաբեի․ հառաչեցման դատապարտելին եւ փրկութեանն․ Բն։ Նախ ծանուցանէ որպէս, նախ՚ շնորհալցեալն սրտին ամենա փրկութեան յայտնաբերական ազդեցութեան։ Երկրորդ՝ նոյն ըստ Ս․ Գ․ Եւ իսկ ծանուցել է ըստ սեղ աղօթեալ՝ յայն աղօթիցս՝ մաքրութեան սեղ խոստովան, այլ եւ բերել շնորհն ընդունելի լինի։ Երրորդ՝ շարադրոյն Ս․ հօրս եւ Մովսէսի յառաջն ի վերայ իւրեանց առաքեալ․ այլ ցանկանն առ ծարաւիչ բարին եւ չարն որ յիշեցաւ։ Չորրորդ՝ ըստ Բն փրկութեանն առաւել յաղթեալ ցուցանէ ևան զՄովսէսին։ Եւ իւ հարցմամբ ածեալ եւ գոչման նմանացաւ եւ ծաղկեցաւ ի վերայ հեթանոսաց․ առ հանդերձեալ որ դատաստանին փոքր եւ չնչին են։

✵ ԲԱՆ ✵ Ա

ՁԱՅՆ ՀԱ ՌԱՉԱՆԱՑ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՈՂԲՈՑ ՍՐՏԻՑ ԱՂԱՂԱԿ ՔԵԶ ՎԵՐ

ԸՆԾԱՅԵՄ ՏԵՍՈՂԴ ԳԱՂՏՆԵԱՑ

✵ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ✵

ՐԱՅՍ ՏԵԳԻՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՍԱՐԳԻՍ ՎԱՐ
դապետն ընկեր եւ համշիրակ Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյն, խմանալ կարդ արմար եղելոց կան ձայնից․ եւ հանեցելն՝ համառօտ աղաչանկն Մովսէսի․ եւ այլ եւ իցն Յոհաննու․

Բայց ո՛չ էր այն յօժարեալ՝ աննշանական ձայն՝
ապա թէ ոչ՝ ո՛չ ասէր Պօղոս հաւատացելոց·
որով իբր թէ կամի ասել, փոխանակ ձայ-
նի՝ քեզ նուիրեմ զհառաչանս սրտի իմոյ·
և փոխանակ ողբոց լալականաց՝ զհեծութիւնս
հոգւոյ իմոյ· և փոխանակ աղաղակելոյ՝ զո-
չեմ սրտիս, զի տեսօղ ես գաղտնեաց· և ա-
ռանց արտաբերելոյ զբանս ձայնիւ, իմա-
նաս զիղձս և զկիրս սրտից : այսպէս մայրն
Սամուէլի անմռունչ ձայնիւ հեղոյր զանձն
իւր առաջի Այ, որոյ շրթունքն միայն շար-
ժէին, և ձայնն լսելի ո՛չ լինէր· և լուաւ նմ
Տր՝ զոր Հեղի համարեցաւ զնա արբեալ·
·Ա· Թագ·ա, 13 : ահա կիրք սրտին կարծե-
ցուցին զնա արբեալ· բայց որ արտաքին
թշուառութեն ո՛չ լուաւ Հեղի, և'ի ծփերց
մանէ եւ խօսացն ո՛չ ծանեաւ զներքին ցաւ
սրտին, գաղտնեաց քննօղն ետես և լուաւ·
ըստ այնմ լսել զհեծութի տնանկաց : այսպ 'ի խո-
րոց կարդայր Դաւիթ առ Ած : և Պօղոս
գրէր, սաղմոս ասացից հոգւով, սղմս ա-
սացից և միտօք· կացից յաղօթս հոգւով,
կացից յաղօթս և միտօք : քանզի ձայնի մր-
դիկ լսեն, և սրտից Ած : վս և Սբս Գրի-
գոր փոխանակ ձայնի՝ զհառաչանս սրտին,
իբր զձայն նուիրէ Այ· և'ի տեղի ողբոց՝ըզ-
հեծութին· և փոխանակ գոչման՝ զսրտին ա-
ղաղակն : վս զկնի ասէ, [illegible]
[illegible] : զի ըստ Այ ըմբռնելի ձայնքն են
նշանակք կրից, և կիրքն են նշանակք ձայնից·
այսպս 'ի կրից հառաչանաց և'ի հեծութէ, կա-
րեմք իմանալ զներքին ցաւս սրտից : այլ զի
Ած յամ ուրեք ներկայ է, և գաղտնիք սըր-
տից մերոց յայտնիք առաջի նր առաւել քան
մեզ· վասնորոյ ո՛չ կարօտանայ արտաբերա-
կան ձայնից մերոց առ'ի յիմանալ և'ի լսել, և
թէ ոչ պատճառաւ ժողովրդեան լինիցի ձայ-
նիւ ընթերցումն յեկեղեցւոջ : որպ և մեծն
Վարդան ասէ· ելից ժդ·15 : 'ի վր այնմ,
զի՞ գոչես առիս, զոր ո՛չ ոք էր որ լսէր
բայց որ ստեղծ առանձին զսիրտս նց, 'ի միտ
առնու զամ որ 'ի ծածուկ սրտին աղաչէր
զնր, յորմէ գոչիւն ելանէր առ Ած· որ չէ
հեռաւոր, այլ՝ մերձաւոր և այլն : և կոչումնե
լիոս 'ի վր նոյն բանին ասէ, Մովսէս ջերմե-
ռանդ միտօք վերացեալ առ Ած՝ առաջի նր
աղօթեաց· ո՛չ յանդիմանելով զնր աղօթսն,
այլ քաղցրաբար զնա մխիթարելով· որ-
պէս և Բեն առ Մայրն, զի՞ կայ իմ և քոյ·
ո՛չ պատժոյ՝ այլ յուսոյ էր ցուցումն : և'ի
Բեռնարդոսէ առեալ ասէ, 'ի յունկս Այ

սաստիկէ խղճն· որոյ ընդդէմ թոյլ դիմաւո-
րութին՝ է ցած ձայն : և սբն Ոսկեբերանն 'ի վր
քանանացւոյն ասէ· թէ և 'ի ճանապարհս
և 'ի հրապարակս ըստ այլոց կենցաղավարիցեմք
միտօք առ Ած աղաղակել պարտիմք : և այլ
ոմն ասէ, առ Ած զօրեղ է, ո՛չ մեծ աղա-
ղակն, այլ մեծ սէրն : և թէ՝ նորին աղօթն
է կտրեալ, որոյ և պտճառն աղաղակէ, և լե-
զուն, և գործն, և բանն, և վարքն, և խոր-
հուրդն : և Օգոստինոս ասէ. մինչ աղօ-
թես՝ աղաղակեա· ո՛չ ձայնիւ՝ այլ միտօք· վս զի
և զլսելն Ած լսէ, ո՛չ խնդրի տեղի որ քննա-
զգայութին : Երեմիաս 'ի բանտին զօրանայ :
Դանիէլ 'ի մէջ առիւծուց ցնծայ : Երեք
մանկունքն 'ի հնոցին խայտան : Յոբ՝ մերկ
'ի փողոցում խնդայ : Աւազակն 'ի խաչին ե-
գիտ զդրախտն· ո՛չ է տեղի, ուր ոչ է Ած :
և Յովնան 'ի փորոյ կիտին աղօթէ, և Ած ներ-
կայանայ լսէ : յորոյ վր ասէ Սբն Ներսէս
Լամբրոնացին, վզգայարանս իւր, կէտն ետ
պաշտպան Յովնանու յաղօթելն, զմիօրի-
նակ փող որ բարբառի ձայնիւ հնչողին· և
էր սքանչելի տեսիլն· կէտն լեզուաւ իւ-
րով բարեխօս լինէր առ Ած վս Մարգարէին
փրկութեն : և 'ի վր. այնմ սղմսին, 'ի խորոց կար-
դացի և այլն· ասէ մեծն Վարդան, ո՛չ լե-
զուաւ և վեր 'ի վերոյ շրթամբք, այլ 'ի խորին
խորհրդոց, լի յուսով, և սերտ յօժարութբ
կարդամ· այլ ո՛չ այնպս որ ասէ, մերձ ես
դու 'ի շրթունս նց, և հեռի յերիկամանց
նց : և Սբն Ներսէս Լամբրոնացին ասէ, ո՛չ ա-
սէ լեզուաւ կարդամ առ քեզ՝ և ձայնի
բացայայտմամբ· քանզի գիտեմ թէ մարմնա-
կան ձայնի աղաղակ՝ առանց մտաց ընթա-
ցակցութեց ո՛չ է քեզ հաճոյ : որպ և ասէր
մարգարէին առ իմէ, 'ի բաց արա յինէն
զձայն սրնկի և զերգոց : իսկ 'ի խորոց սըր-
տին աղաղակն հասանէ առ նա առանց ըզ-
գալի ձայնի· ըստ այնմ որ ասէր առ Մովսէս,
զի՞ գոչես առիս : և սմ ասէ, 'ի խորոց սըր-
տէ կարդամ առ քեզ Տր· և դու զսրտիս
ձայնն լո՛ւր : և այլն :

[illegible]

Եւ ահա աստէն կամի պտղաբեր նուիրել
Այ և զայն խորհրդաբար· ուստի զթախ-
ծութի սրտին առնու փոխանակ հրոյ· և'ի տե-
ղի նուիրելի պտղոյ՝ զխղճն և զփափաքն սըր-
տին· որ ճենճերքն է սասանմամբ և երկիւ

 ղէ

զի՞ մտացն ․ իսկ բուրվառի փոխան՝ առնու զկամսն ։ այլ սրովբէութե՛ ի վեր անդր փոխանակ ձայնի՝ զհառաչանսն եդ ․ և փոխանակ ողբոց՝ զհեծութիւն ․ և փոխանակ գովման՝ զարտսն աղաղակն ։ այսպէս և աստանօր այլաբանօրէն պատարագ իմն կամի յօրինել, վս՟յ զթախծութի սրտին՝ առնու փոխանակ հրոյ, որ անձին ախտից է տօթորիչ ․ և փոխանակ պտղոյն նուիրանաց՝ զկըձըն սրտին և զփափաքն, որ ճենճերեալն է երկիւղիւ ․ և փոխանակ բուրվառի՝ առնու զկամսն, և նովիմբ կամի զպտուղ անուշութե ի վեր առաքել ։ զոր շնորհալին Սարգիս, Հօրն Ներսէսի իմանայ զյօժարութի կամացն ի յաղթս ․ զի մինչ ըղձիւ ջերմանայ հոգին, վառի ոչ զհուր ․ յոր եթէ զխունկ աղօթից հգիցես, վառի և զհոտն հանէ ․ ոչ և զըղջացեալ անձն՝ զաղօթս ՚ի բոլոր սրտէ՝ իբր զպտուղ ՚ի ծառոյ ։

❋ Վասն խորհրդոյ բարձն Բոլորապատուղ նուացեալ ծնողին Բարդուղեան ։)

Պատարագ Բոլորապատուղ կոչէ զողջակէզն, որոյ բոլորն հրով այրեցեալ լինիւր ․ և ծառ բարդութե կոչէ, զոր ոք գիրս հոտ անուշից ասէ, ղևտ, Ա ․ 13 ։ քանզի ոչ ասէ Սուրբն լինս ղևտ, Ա, 9 ․ այլեւան և մսոյ գարշահոտութին բարձեալ էր Ա՟Յ ՚ի պատարագացն հրէից, և ՚ի տեղի նր եդեալ անուշահոտութի ․ ապա թէ ոչ՝ ՚ի մշտնջենական պատարագ լինիւր ծայրագոյն հոտ, ոչ յայտ է յայրեցեալ և ՚ի խանձողեալ մսոց ․ զոր հրեայք կարծէին թէ Ա՟յ այնու հոտով հեշտանայր և զմայլիւր ։ բայց Սբն Գրիգոր ասէ թէ յայնժամ նշ պատարագաւն հաճէիր, այլ զայն խոտեցեր և ատեցեր ․ Սուրբ ինչ բարդ օրհնութ ․ զի զողջակէզս և զզոհս նոցա ատեցեր ։ ուրեմն յայս իմ պատրագս օրհնութեան՝ զոր ըղձիւ սիրոյս քեզ մատուցանեմ, առաւել հոտոտեսցիս գթած ․ զի զոր նոքա այրէին և զծուխն քեզ հեշտութի կարծէին, փոխանակ այնոցիկ ծխոց, ահա ես զիս սիրով քո այրեմ, և զաղօթիցն իմոց բազպատարագն՝ համդերձ անուշահոտութբ ոգեացս քեզ ծխեալ վերացուցանեմ, ուրեմն զհոտոտելդ աղաչեմ ։ և զանուշ յոդուածս բանիցս՝ քեզ ՚ի հաճոյս, և մի ՚ի բարկութիւն ընդունել հայցեմ ։

❋ Ըստ Եւագրեայ ասել շնորհաւորեաց, և այլն ։)

ԺԹ ՚ի ներքին զգայութեցս իմոց՝ ՚ի խորհրդա-

ն ա

կիր սենեկէ սրտիս, այս իմ բանաւոր նըւէրս որ ողջակիզեալն է զօրութբ ձայնից նուագայդ շնորհաց, եկեսցէ առաջի քո իբրև զպատարագ անուշութե ․ և իբր զբանական ողջակէզ ընդունիցի ։ այլ խոր գիտութեան կոչէ զներքին զգայութիւն ։ տես Դաւթի փիլիսոփայի սահմանաց Բ, գլխոյ վերջն ․ յոր մէ և Սարգիս շնորհալին առեալ է զբանսն ։

(Է) Ըստ Եգնեայ եւ խորանեալ տուեալ ․ և այլն ։)

Ոչ թէ յարդարուն իւր յուսացեալ ՚ի դատմտանել ժպրհի Է Ա՟Յ ․ զոր Է դէմն ասէ Յոբ ․ Թ ․ 32 ․ ոչ ես իբրև զիս մրդ՝ թէ ՚ի միասին եկեսցուք ՚ի դատաստան ։ և Է Գրնթի, մի մտաներ ՚ի դատաստան Է ծառայի քում ։ այլ խանդաղատական կերպիւ խօսի ․ վս՟յ խոտնելոյ աղերսել ասէ ։ և միտն է, իբր թէ, մինչ վն տկարութես և թյլատրութեդ քո անկանիմ ՚ի մեղս ․ և առ քեզ բողոքեմ զսուխէ մաղթայս, մի լիցի թէ ասիցես և ինձ՝ ոչ ասացեր առ իէլ, զի՞ է գալ բողոքել ձեզ առ իս՝ և ինձ ոչ լսել ։ և թէ յորժամ համբառնայցէք զձեռս ձեր, դարձուցից զերեսս իմ ՚ի ձէնջ ․ Եսայ․ Ա ․ 15 ։ և կամ թէ, իբրև զանիրաւութին բաբիլոնի տաղտկալի քեզ երևեսցի՝ Է սաղ․ ՃԷ ․ 7 ․ ուլյեն ոչ ՚ի ձարպոյ անիրաւութք նց ․ զի գնացին նք Է խորհրդոց սրտից իւրեց ։ որ զայս տեղիս մեկնէ Ե՟ն Ներսէս Լամբրոնացին յաղքատս և ՚ի մեծատունս ․ զի մեծատունքն գիրացեալք և լծընկեցք գոլով ․ ՚ի պատահեղն ումեք տկալի՝ հարկանեն ։ իսկ աշխատեալքն ծով աղքատութ, հեզք և խոնարհք են ․ վս՟յ հարստահարեալք լինին ՚ի մեծատանց իբր ՚ի ցլուց ։ այլ դու (ասէ) ով Տր, մի ձարպով շնորհաց քոց զիս գիրացեալս, ըմբոստացեալ և փքացեալ վարկանիցիս, և աքացող և լծընկէց կարծիցես, և զայս իմ ելկս աղօթական բանից, յանիրաւ գիրութե համարիցիս ․ զի յիմարութ և այլանդակ ցուցանքէ ՚ի շնորհաց քոց ինձ հպարտանալ իբր ՚ի լուսոյ խաւարիլ ․ և ոչ ՚ի հոտոյ մեռանիլ Է օծից և դեղք մահճնայ ․ և հայիւ քաղցնուլ ։ վս՟յ ասէր Սբ Գրիգոր Պապն, որ պատճառաւ առաւ ինուե փքանայ, ոչ որբով՝ այլ դեղով զինքն սպանանէ ։ այլ ես (ասէ) աղօթկն բանիւքս՝ մինչ Է քեզ խօսիմ Տր իմ ․ խոտնեմ և զաղերսն իմ ․ զի մի առաջի ամենամեծիդ վքանալ երևեցայ ․

զի մինչ աղօթեմ, ես ընդ քեզ խօսիմ. և
մինչ ընթեռնում, դու ընդ իս խօսիս:
([illegible]) և այլն: Ք այս իմ
աղօթից բանս, մի՛ տաղտկալի քեզ թուես
ցի և նման համբարձման ձեռացն իմի հա
ճոյ եղիցի, այլ՝ իբրև զխունկն ծխել առա
ջի Տապանակին՝ դարձեալ 'ի գերուէ (որ
առակէր զգիւտ կորուսելոյ և գտելոյ անա
ռակին) Տէրունեալ կամաց քոց լիցի: Իսկ որ
զտապանակն ասէ 'ի Սելով հանգուցել. ոչ
թէ Կարիաթ 'ի Սելով բերել հանգոյց, այլ՝
Նախ էր 'ի Սելով. յորմէ մինչ առին և գնա
ցին ընդդէմ այլազգեաց՝ գերեցաւ. 1 Թագ.
դ. 4. և 11: այլ Դաւիթ եհան զնա 'ի քա
ղաքն իւր 'ի Սիոն, որոյ էր պատրաստեալ
զտեղի հանգստեան. 2 Թագ. զ. 12:
*([illegible] :)
Զայս տեղիս մեկնէ Յարգիս շնորհալին 'ի
վր կոտորմանն այլազգեաց յաւուրս Յօ
սափաթու. 1 Մնաց. ի. 22. ուր աղօ
թիւքն Յոսափաթու՝ որդիքն Ամոնայ և Մո
վաբու պարտեցան, և զմիմեանս սկսան կո
տորել: բայց որ զայս տեղիս այսպէս իմանայ,
միայն առ այն նկատէ թէ հարեալ ընդ մի
մեանս զէն առ սուսեր: սկ յն և այն ես հա
մեմատ այսրէն տեղւոյ, որ ասի Յովել. գ.
2. թէ ժողովեցից զամ ազգս, և իջուցից
զնս 'ի ձորն Յոսափաթու, և դատեցից զնս
անդ: քզի հասարակաց վճիռ է թէ 'ի ձորն
Յոսափաթու (որ այժմ կոչի Գեթսեմա
նի) լինելոց է օր դատաստանին 'ի Քսէ: զի
Յոսափաթ՝ թարգմանի Տր դատաւոր. և
ձոր Յոսափաթու ասի, իբր թէ ձոր Տն
դատաւորի: Որդ՝ զայս լուեալ իմ ասէ.
թէ անդ նստելոց ես 'ի դատել, կրկին լի
նին առիս մարտից յարձակմունք. զի հոգիս
երկիւղիւ խռովեցեալ իբր 'ի քնոյ՝ յահէ
ձայնէ դատաստանին, յառնէ 'ի մարտ պա
տերազմի ընդ ոսոխի մարմնոյս և մոլութեց, որ
հակառակ կայ հոգւոյս զիւր կողմն կամելով
առաւելացուցանել զառաքինութիւն. ոմ և
մարմինն զիւր կողման հեշտալեան և զմեղսն
ընդ Պօղոսի. Հռոմ. է. 23. բայց տեսանեմ
այլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ
օրինաց մտաց իմոց. և գերել զիս օրինօքն
մեղաց: և կմ ոմ և ասէ. հոյլք չարեաց ընդ
բարիս սկսան մարտնչիլ. ոմն՝ զի 'ի վարձուց
մի զրկեսցի. և ոմն՝ զի չարեօք մի պատժի
ցի. և զժամանակն՝ զի ընդ երկար վայելես
ցէ: այսպէս մարտ պատերազմի յարեաւ ասէ
առիս 'ի ձայնէդ այնմանէ թէ, 'ի ձորն Յօ
սափաթու դատեցից զամ ազգս: Թէպէտ զայս
տեղիս "Կրօս լամբր" իմանայ զկոտորածէն
Զօրաբաբելի 'ի դարձին բաբելոնէ: Իսկ որ
կհայլս չարեաց ընդ բարեաց ասէ մարտնչիլ. ոչ
թէ առաքինութիւնքն և մոլութիւնքն ենթակայացել
գոյացութիւնք են, և ընդ միմեանս մարտնչիլ կա
րեն. քզի այս է հեթանոսին կարծիք, որք
զչարն և զբարին յատկապէս յերկուս ստեղծե
ալ ասէին: այլ ընդ բռնում յանձին երևին. ք իհո
գին: Կամք հոգւոյն ցանկայ գեղեցկացն ա
ռաքինութեց, և կամք մարմնոյն ոգեղինացն մոլութեց
զայս ինքեան գեղեցիկս ձևացուցանելով:
վասն որոյ և առաքելոյն օրէնք մահու մեղաց կոչէ
զցանկութիւն. զի է ծուխ և հրապուրիչ առ
մեղս, և համոզիչ մեղաց: սակայն և զերկա
քանչիւրն առնէ մարդս մի և եթ անձնիշ
խանութը. զբարին հոգեկան բաղձանօք, և
զմոլութիւն մարմնական յօժարութը: դրձել՝
զբարին Տեառն օժանդակութը, և զչարն
հրապուրմամբ չարին. զի ոմ բարին և չարն,
այսպէս և յորդորիչքն առ այնս հակումն քեն,
ք Տր՝ և սատանայ: այլ որքան Տրն ըղ
տանայ կարօղէ և զօրեղ, այնքան և առաքի
նութիւնքն քան զմոլութիւնս: ուրեմն որքան դա
տապարտելի մեղաւորն՝ որ տկարին տեղի
տայ, և զհզօրն վանէ, և փանաքի ճնշին մոլու
թէ ընդ դէմ առաքինութեան և տէրողին Տ մար
տընչի տկար զինուք մոլութեն, և չարին յոր
դորմանն լսելով: Իսկ որ ասէ, [illegible]
[illegible]. այն է թէ, ակն ընդ ական՝ ա
տամն ընդ ատաման. և թէ անձն որ մեղիցէ
նոյն և մեռցի: որով կամի ասել թէ, եկն է
հաս և ինձ այն ժամանակն, որ մեռանիլ
ինձ պատահի զմահն յաւիտենից վս հաւա
նելոյս իմոյ չարին հրապուրանաց, և զիջա
նելոյ հոգւոյս ընդ կամս մարմնոյս. որ եթէ
յաւուրն դատաստանի պատճառել կամիցիմ զտը
կարութիւն մարմնոյս, ոչ ինչ օգտիմ. ոմ և ոչ
Եւա օգտեցաւ՝ զօձն պատճառելով, և ոչ Ա
դամ զԵւա պատճառելով. այլ ընդ դէմն յայն
ժամ ինձ պատմեալ լինի թէ, անձն որ մե
ղիցէ՝ նոյն և մեռցի: և թէ, թշնամւոյն քո
ոչ պարտ էիր լսել: կմ թէ [illegible] կո
չէ զկատարումն Մնացուց և Ամբարացուց.
* (Ե) [illegible] :)
Թէպէտ միւս մեկնիչքն զայն 'ի վկայութիւն եդ
առնեն. Եբր. գ. 8: թէ, Մովսէս հաւատարիմ է
'ի վր տանն այ իբրև ծառայ. իսկ քս իբր որդի.
ակն յորժ եղելոյն ընդ ոչ հաւասարի այն

վկայութիւն. զի 'ի բանս վերադիտիս ոչ գոյ մեծ ինչ 'ի մէջ Ծննդեանն ՏՆ և ծննդեանն Մովսէսի, այլ համեմատութիւն է միայն 'ի կողմանէ ծննդ և նորոյ օրինացս, զոր առաւել 'ի Մովսէս և 'ի ՏՆ. զի Մովսիսի օրէնքն ոչ ինչ կատարեալ զմարդ ետուն: ուստի Պօղոս մինչ ասաց (դանկատելով զօրինացն մեղաց, յորմէ օրինօքն Մովսիսի ոչ կարաց զերծանիլ. և վն այն ասաց, այր մի տառապեալ եմ. ով ապրեցուսցէ զիս 'ի մարմնոյ աստի չարէ. զինի ասաց. այլ շնորհք Այ 'ի ձեռն ՅՍԻ ՔՍԻ ՏՆ մերոյ: Հռոմ. Է. 24: Նոյնպէս ակնարկէ և առ այն բանիւ, գործ. ԺԳ. 38: ուր ասաց Պօղոս. զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւետարանի. և յամէ յորմէ ոչ կարացիք օրինօքն Մովսիսի արդարանալ, սովաւ ամ որ հաւատայ, արդարանայ: Իսկ ՏՆ օրինակ եղև Մովսէս, օրինացն պաշտօնատարութեամբ. և եկեղեցւոյ ՆՐ ծննդ ժողովրդեանն ծնունդելով. այլ ՏՆ հեղինակ էր ծննդ. և եղև և նորայս օրինաց տուիչ: զծնդոց և հաւատոյ եղև 'ի մէջ տան իւրոյ իբրև զորդի: ուրեմն միայն 'ի կողմանէ այսմ համեմատութեան առնանի Մովսիսի ընդ ՏՆ, և ոչ եւս այլոց' զոր մեք 'ի վեր անդր բերաք 'ի վկայութիւն:

✱ Մ [illegible] (որպ գիր ասէ) [illegible] Յոսափաթու. [illegible] [illegible]) և այլն:

Աստէն խառն են երկու վկայութիւնք. մինն 'ի Յովելեայ. Գ. 2. ըստ այնմ, ժողովեցից զամ ազգս 'ի ձորն Յոսափաթու, և դատեցից զնս անդ: և երկրորդն է, 2 մնաց. Ի. 5: ուր Յոսափաթ արքայն յուդայի աղօթիւք կործանեաց զԱյ յօգնութիւն իւր 'ի վր Ամոնացւոց և Մովաբացւոց. որք մինչ դիմեալ էին միաբանութեամբ կոտորել զՀրէայս. Ամոնացիքն յարեան 'ի վր Մովաբացւոց. և յետոյ 'ի վր միմեանց յաղթուեցին. և կոտորեցին զմիմեանս: Արդ կամի բացայայտել կոտորեցին զիրեարս: Արդ կամի ասել Սբ Սրդպոս թէ, այն կոտորածն որ եղև աղօթիւքն Յոսափաթու, և խղճալի գործունէքն որք դիպեցան Մովաբացւոց և Ամոնացւոց. փոքր և չնչին էին' և են' համեմատութեամբ երկրորդի հանդերձեալ աւուրն դատաստանի. որպ ասէ թէ, [illegible] [illegible] [illegible] Յոսափաթու. [illegible] կոչէր ձորն գեթսամանի. որ կոչիւր ձոր յո-

տափիթու. վն զի անդ լինել էր յօսափաթ թագաւորն զգործմանն իւր. և կմ զայլ լինումն և կմ անդ արարել զմեծ ինչ գործ. որպ ասէ Մբ Տերեաց պատմիչն, Դ. գրքոյ. Ը. գլ. և կմ զի յօսափաթն նշանակէ դատաստան. որպ ասէ նոյն պատմիչն, և կամ 'ի տր դատաւոր, որպ թրգմանէ Ջերօ: Նոյնպէս զի այն ձորն նեղ և անձուկ կոչի. և սկսին Ծայլին հրաշիւք ըզ բոլոր ազգ մրդկն տանի յինքեան յաւուրն դատաստանի, և կմ հուրն որ գալոց է առաջի ՏՆ, հրդեհելոց է զերկիրս, և հաւասարելոց է զլեռինս: ուստի 'ի տափարակէն այնորիկ տեղւոյ լինելոց է դատաստանն. որպ ասէ 'ի վեր բոյ գրել տեղւոջ Սբ Եւկերի պատմութեան: Արդ 'այն զարհուրելի տեսարանի աւուրն դատաստանի, օրինակ եղև (ասէ) կոտորածն Ամոնացւոց և Մովաբացւոց: այլ Դէյ (ասէ) զօր Տեառն, Մանիր' զի ոչ ասէ մերձ է օր մեր, այլ' օր Տեառն. զի ամ աւուրց անցելոց և ներկայից և ապառնեաց, մերձ է ԱՅ. և հազար ամ յաչս նր որպս զանցեալ օր երեկեան իմանին: այլ և փոքր հանդիսարան ասացաւ տեղին այն, վն եղելոյն 'ի նմ կոտորածին. և յիրաւի' փոքր էր համեմատութեամբ մեծի հանդիսարանի աւուրն դատաստանի: Իսկ [illegible] կոչէ զայն թէ, չևեն լցեալք մեղք Ամորհացւոց և Եղոմացւոց. որ գրէ թէ մինչ կոտորեցան 'ի միմեանց աղօթիւքն Յոսափաթու. մեղք նց լցեալք են ղէն. և վրկոչեցին 'ի վրէժխնդրութիւն զԱյ այն բարկութիւնն:

✱ Ա[illegible] [illegible] [illegible]) և այլն:

Արքայութիւն առ բարիսն է փառօք. և առ չարս պատժօք. որպ առ Յոսափաթ և առ Եղոմայեցիսն ցուցաւ: նոյն ուրեմն վրէժխնդրական արքայութիւն ԱՅ և թագաւորութեան սաստկութիւ պատուհասից ժամանեցին (ասէ) և առիս վն դառնալոյ իմ մարմնոյ, որ մինչ զկնի այնքանեաց բարերարութեց որ ինձ փոխ ետ զշնորհսն' զի գործեցից նոքօք, և ոչ գործելով իմ 'ի վարշամակի ծուլութ թագուցանելով. կրկին տոկոսեաւց գտայ պարտաւոր. զի որպ որք տոկոսեօք փոխ առնուն, և 'ի ժամադրեալ պահուն չկարիցեն տալ, փոխատուքն եզչաց 'ի վր բարդեալ, մայր առնեն զտոկոսիսն. այսպ և ԱՅ փոխատու գոլով ինձ շնորհօք և կամելով' զի ես զառեալն նր շահեցուցանէի: իսկ ես յուլութ միմնոյ տուել զիս, և շնորհացն նր, և ոչ գործեցեալ

տուայրինութեցն ('ի ձեռն նորին շնորհաց) պարտական գտայ․ ևս այնմ, և ես եկեալ առ կոսեալ պահանջելի զնմա։ և այսց մխաստուց որ եղև պատճառ, եթէ ոչ՝ մարմին լինելոյ իմ, և մարմնոյս իմոյ կարեաց հետևելոյ։ Իսկ զոր չշնորհս նորին չհրաշամբ առնէ, երբ թէ Յովսափաթ ձեռին տարածմամբ առ ԱԾ․ ընկալաւ զփառաւոր յաղթութիւն 'ի վր թշնամեաց․ զի ԱԾ չկոտեալ զթշնամիս նր, միմեանց եւ զնա սատակել․ և զօր հիւրն Յոսափաթու բարձրացոյց՝ քարեայ կարկտիւ զթշնամիս նր հալածելով․ որպ ա սէ Շնորհալին․ թէպէտ և այն ոչ է գրեալ 'ի մնացորդսն․ այլ եղև 'ի ժամնկս Յեսուայ որդւոյ Նաւեայ։ յեսուեայ․ Ժ․ 11։ ասյա ես ասէ) որչափ ևս առաւել պարտական եմ ԱԾ․ զի ոչ զձեռս իմ և եթ 'ի վր թըշնամեաց, այլ և զբոլոր անձն իմ զօրացոյց 'ի վր անմարմին թշնամեաց իմոց՝ առնել քան զՅաղթութ 'ի վր Դողդութեան։ որ երբ թէ այնքան շնորհաց ապերախտ գտեալ․ վսյ զկնի ասէ թէ։

✻ Ընդ ուղղոն եղբեռ և այլն։)

Յայսնկն 'ի ձմեռն երբեմն ինչպես մատնեցան 'ի ձեռս Եգովմայեցւոց․ և երբեմն փղշտացւոց․ սակայն ժամանակաւոր պատժոք տուժեցան․ որպս Քուսարսաթեմայ արքային ասորւոց գերի եղեն ութն ամ․ և ազատեցան Գոդոնիելիւ․ դատ․ գ․ 3։ և Եգլոմայ արքային զամս ԺԸ։ և ազատեցան միջնորդութբ Յէովդայ, որ սատակեաց զեգլոմ։ դատ․ ու․ 12։ և այլոց բազմաց․

սակայն իմ մեղուցս պատիժքն (ասէ) առանց ամապատճառ ունին զատհման․ զի շատ առեալ 'ի շնորհացն ԱԾ, վսյ շատ խնդրի յինէն փոխարէնն առաքինութի, և ես ոչ գործելով օգնականութբ շնորհացն առեցելոց յաւիտենից պատժոց գտայ պարտաւոր․

✻ Ջ՝ կոչ՝ և ուղղոյն և այլն։)

Յայսնքն ինձ պահեալ կայ առ՝ գուբ՝ն որոգայթ, ըստ Եսայ․ ԻԴ․ 17։ որք են շաւիղք պատժոց՝ սահմանեալ 'ի վերջն դի մեղաւորաց․ զի որպէս խորտակիչ գնի մե թռչնոց և գազանաց առ 'ի երկնչել․ և մինչ 'ի նմանէ երկուցեալք փախչին՝ յորոգայթն ըմբռնին։ այսպ և ժամանակաւոր պատիժքն համեմատեալք յաւիտենականաց՝ են որպ զխրտուիլ թռչնոց․ յորոց 'ի պատժոց եւյաւիտենականացն առաքինութեց փախուցէին անկանին 'ի յորոգայթ և 'ի խոր խորատն դժոխոց։ այսպէս ասէ և Կղեմենտիոս՝ առեալ յՍգոստինոսէ, մինչ երկնչին 'ի սուտ համբաւուց, անկանին 'ի ճշմարիտն՝ իբրև 'ի պատրուակեալ գազանաց (որք շրջապատին թեւրոք) փախուցեալք՝ ըմբռնին 'ի ճշմարիտ գազանաց։ որք երբ յորոգայթէ անցանեն յորոգայթ։ իսկ առակաց բանն է թէ առն մեղաւորի մեծ է որոգայթ։ ԻԹ․ 5․ 6։ Արդ՝ որ այսքն պահին մեղաւորաց 'ի վերջն աշխարհի՝ ինձ (ասէ) ահա մերձ են, և առ դուրս հասեալք․ զի զկնի սակաւուց յետ մահուանս ըմբռնեն զիս յինքեանս։ յորոց զերծուցանելն քո կարողութեանդ է (ասէ) գործ։ Յոբայ․ Թ․ 10․

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ի Սոյն գլխոյ՝ Սուր ցուցանէ Բէլ Լծ ոչ հոյժ ի բանս՝ ոչ ի կործս ։ Բ, Դանեցուցանէ շինուն բարւոք գործոցն ։ Գ՝ Խնդրէ՝ չէ ոչ յոլովն բանս իւր՝ հոգեւոր ընդունելի ։ Գ՝ Ողորմի չէն, չէ տոյէ խնդրեն սէրս ողջամին՝ Նաւչ ուրառնանց, Ճշմարտուն հրեշտակաց ողբմաց ։ Ե՝ Խնդրէ չէ ինծ ընդունելի շնորհս զօրութեան բանս, նոյն փոխարէն ողորմեա ։ Զ՝ Ողորմի չէն՝ բանանեալ շնորհաբաշխին իւր ։ Է՝ Խնդրէ ցոյ չէ ծանօթանալոյ մեղաց իւրոց՝ ամենայն շանթովն դրոյն ։ Ը, ցերեկոց վրանաց շողուտոյն ցանկոյ մաքուր, Խնդրէ ճշմարտութ հրեշտակաց ։ Ինոր՝ ոչ տանէ Պատ շենութեան ամբողջութեան նորա ի խնամոծուծն ։

✽ ԲԱՆ ✽

ԼԵՐՍՏՏԻՍ ՅԲՐԻԵԼ
ՈՒՐԱԺ ԿՐԿԻՆ ՀԵ
ծութէ. նորէն հաւոյ ի. ամենոյն ս զերս մտաւ բան. յօ. բան ի խորոց սրտից խօսք ընդ ած)

✽ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ✽

Այս խորագիրս Թուի ինձ բոլորն զոլ Սբյն Գրիգորի ։ քանզի յամուռ գլխոյ այլ և այլ ձևով և դիտաւորութբ յաւելու զմեղա-գրանս անձինւորյ՝ առաջի Այ զինքն պար տաւորելով, և կրկին հեծելով փոխանակ ողբոց ։ իսկ նորէն հանոյ ի ասելն՝ Թէպէտ ա նուն զովեն Թուի, սակայն է Թարգմանուն անուն իւրոյ. զի Գրիգորն հսկող Թարգ մանի 'ի հելլենին լեզուն ։ ատ նոյն ողջ մաղ բանից ։ Բ առ Այ ։ բան ի խորոց սրտից ։ Ը բաւ է ձայն հառաչանաց ։ և խոստ ընդ ած ։ Ը որում է աղօթք և խօսակցութի ընդ Այ ։

(Ա) Եւ որք՝ խաղի ի առ բազմերեսուն նայիս ։)

Աչսինքն՝ առ Այ յոդուածոր չըթամբք այսինք աղօթից դու կարդաս անձն իմ. որոյ առջև ստեղծաբանութիւնքն մրդկն ծառայականք են, և միայն գործքն են որք զնա գրաւեն 'ի սի րել զքեզ ։ ուստի և առաքեալն ասէր, արքայ ութին Այ ոչ կայնայ 'ի բանս այլ 'ի զօրութիւն ։ Երբեմն և Թեռայեցի խմենիոս փողահարն 'ի գովելն զմեծն Աղեքսանդրոս. կոչէր զնա Թագաւոր և զարմ չածոց. շքեղ և գեղեցկ ։ եթէ՝ այժմ փորձիւ ուսայց զքո հանգիստ պատիւ Ածազօրութեն. և այլն ։ առ որ ցաս մամբ ասաց Աղեքսանդր. ովչ խմենիոս նոր չ խար տրամուն, և ծնունդ չար կադմեա ցւոց, կոյր և աչացու. հանձարականս ինչ և տաւարելս խօսելով՝ կարծես խաբել զա

Ղեքսանդրոս ։ Որդ՝ եթէ երկրո՛ր Թագ՛որ մի տունից արդեանց՝ առատպել վարկաւ զգո վասանութիւս ստեղծաբանութե. և ոչ այնու կա շառեցաւ. ապա քանիմ ևս Այ Թագ՛որն Թա գաւորաց ոչ կաշառի բանիւք չըթանց, այլ կատարմամբ գործոց բարեաց. զի վս այնպի սեացն՝ ասէր Այ Եսայեաւ Թէ. ժողովուրդ այս չըթամբ պատուէ զիս. և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի են յինէն. Եսայ. իԹ. 13. որ ևնմանեցայ ասէ) հրեիցն. որք Թէպէտ մարմնով 'ի լեառն էին, այլ հոգւով յեգիպտոս՝ Ը ասից Սբյն Ստեփանոսի Թէ, դար ձան սրտիւք իւրեանց յեգիպտոս ։ Նմնչ և ես ասէ) Թէպէտ բանիւքս այսուքիւք Թուիմ 'ի լեառն և 'ի կատարն առաքինեաց վերացեալ. ակն յն մտօքս և կամօքս՝ միշտ 'ի մոլութիւս Ռ եմեմ ։ վս, Թէ որո՛ց նմանեցուցանէ զինքն յառաջն ասէ.

(Բ) Պատժանիցս խործանելոյն Սոդոմայ ։)

Բանզի սոդոմայեցիքն յղփութբ ցորենոյ և գինւոյ յորացեալք իբր խողովք աղծաղծեալք պղծութեն բղջախոհուե. վս, և երկնատեղաց հր րով այրեցան ։ այսպէս և ես (ասէ) պարարե ցեալ բարեօք բնականօք և գերբնականօք, եստ զանձն իմ մոլեաց. որ Թէ ոչ հրով ա րեցայ, ես հրով բղջախոհուէ տապիմ ։

✽ (Ի մերերանեալ տառապանաց Սինուէի ։)

Իբր Թէ մինչ աստէն դատապարտեալ լինիմ չա րութեն Սինուէացւոց, զապաշխարութի նց զզոյն ոչ ունելով. յաւուրն դատաստանի 'ինա ցանէ յանդիմանիմ ։ զի նք միոյ մարգարէի ծա ռայի ան՝ լուան և ապաշխարեցին. և ես ան տեղի ձայնին ոչ լուեալ. վս, կարկէ պապանձիմ 'ի յանդիմանելն նց զիս 'ի տիեզերական հրապարակին. որպէս Թէ, արք նինուէացիք յարիցեն յաւուրն դատաստանի ։ և այլն ։

✲ (Ընդէր բարբարոսս՝ կամ զթագուհին հարաւոյն։)

Բան զի նա կանացի տկար բնութեամբ եկն 'ի ծագաց երկրի լսել զիմաստութիւն Սողոմոնի· և աստ Որդի իմաստութեանն Հօր քարոզէ՝ և ես ոչ լսեմ· վասն յանցանի և 'ի տկար ոգի բարբարոս կնոջէն այնոր յանդիմանիմ։ բարբարոս կոչէ զտիկինն սաբայ· Թէպէտ Մովսէսի պատմագիրքն զՀրեայսն և զպիտոսխանիս նոր առ Սողոմոն՝ ցուցանէ գոլ կատարեալ փիլիսոփայի։ զի լուաւ զիմաստութիւն Սողոմոնի՝ և եկն լսել· ուրեմն սիրող էր իմաստութեան· վասն և իմաստնաէր։ և զի առակօք և խրթին բանիւք եկն փորձել զնա· և զարմացաւ ընդ իմաստութիւն նորա և 'ի կարգաւորութիւն տան նորա և ծառայից· 3 Թագ· Ժ։ և 2 Մնաց· 9· 1։ Իսկ զոր մացուցանէ (ըստ Պօղոսի Թեսաղոնիկացւոց փիլիսոփայի) սկիզբն իմաստութեան։ ուրեմն ոչ էր բարբարոս։ զի բարբարոս նոյն է՝ որ և խուժադուժ, տմարդի, և անուսումն· 'ի Պարպարս երկրէն Թուննուզու և Դեզայիրու ընկալեալ զանունն· կամ որպէս ասէ Կոսմիլոս· Հռոմ· Ա· 14։ Բարբարոս անուանէ յունական· զի յոյնքն զամենեսեան որ ոչ գիտէր զյունական լեզուն կամ զհեղլենականն, կոչէին բարբարոս։ և 'ի Պղատոնէ անուանել ասէ Թէ, զհռոմեցիսն յոյնք կոչէին բարբարոս· վասն ոչ գիտելոյ նոցա զյունական լեզուն։ ուրեմն և տիկինն սաբայ կամ համեմատութեամբ առ Սողոմոնի իմաստութիւն· և կամ վասն ոչ գիտելոյն զհեղլենական լեզուն՝ բարբարոս կոչիւր։ սակայն ըստ ինքեան՝ էր սիրող իմաստութեան· և առակաբան խելք զնա։ վասն որոյ Կոռնելիոսի 'ի վերայ Մատ· ԺԲ· 41· եկն փորձել զնա առակօք, և յաղթել· կամ որպէս 'ի նմանէ զիմաստութիւն։ և Սեղբեսս Գորգոր ասէ Թէ, նա կին գոլով եկն 'ի ծագաց երկրի՝ 'ի ծայրէն Սաբայու· այսինքն եթովպիականին երկրէն· կամ 'ի սաբայու Եթովպիական երկրէն 'ի Հայկ չրստանու (որ պատճառ հայեցու Թագաւորքն զինքեանանն ցարդ ես որդի սողոմոնի ասեն· իբր Թէ տիկինն խուրեց 'ի սողոմոնէ սաղմն առեալ· և 'ի նմանէ Թագաւորութեան նոցա յետ այնորիկ սերեալ) լսել զիմաստութիւն նորա· և ես այր գոլով ցեղիս, տկար և անարի գտայ քան զնա։ զի քան մերձ է առ իս իմաստութիւն Հօր, և ոչ լսեմ նմա. վասն և ոչ իմաստնանամ գործնական կենօք։

✲ (Սոդոմացւոց կամ Նինուէացւոց։)

Զի նա Թէպէտ ոչ ծանեաւ զմերկութիւն հայր իւրոյ, սակայն փոխանակ հօր իւրոյ անկար-

գութեան նոքին անխնայեցաւ· այլ ես վաստակ բազում քան զնա· զի ոչ 'ի նոյն, այլ 'ի Որդւոյ անխնայիմ· չար և անխնայ մանուկ անուամբ· զի ծանեայ զնա Տէր՝ Տէր՝ ասելով· և զհրամայեալսն նորա ոչ կատարեմ։

✲ (Յամառեցելոց կամ զամաղէկ։)

Զի ամաղէկացիքն ոչ տային անցս որդւոցն Իսրայէլի երթալոց յերկիրն· այլ և պատերազմաւ ընդ դէմ նոցա ելին Թէպէտ իմիք իրաւանց և բանիւք պատճառաց· վասն իրաւամբ կոտորեցան 'ի Յեսուայ տարածմամբ ձեռացն Մովսիսի· իսկ ես առաւել յամառեցեալ եմ քան զամաղէկ· զի տեսանեմ զբազում տեսիլս իմոյ Յիսուսի տարածեալ 'ի խաչին 'ի նշան գրկախառնութեան, և դեռ ևս ընդ դէմ բարերարին իմոյ, ամաղէկայ նման 'ի մարտ ելանեմ մոլութեամբ և մեղօք։ Ել· ԺԷ· 8։

✲ (Ընծայելոց կամ Երուսաղէմայ։)

Սմանեցուցանէ զինքն այնց քաղաքաց, յորս բազում զօրութիւնս արար Որդի՝ և նոքա ոչ հաւատացին. վասն և իրաւամբ անխնայեցան· ըստ այնմ, վայ քեզ Քորազին· վայ քեզ Բեթսայիդա· Մատ· ԺԱ· 21։ Պարձել Երուսաղէմ կոչէ· քանզի մինչ Քրիստոս նախախնամիչ էր Հրէից, նոքա զբարերարն Թողեալք, զկուոց պատկերս 'ի յորմս դրոշէին առ 'ի պահպանութիւն քաղաքաց։ ուստի և Քրիստոս ասաց բերանով մարգարէին Երեմ· ԺԱ· 13։ Թէ, ըստ Թուոյ քաղաքաց քոց էին չաստուածք քո Յուդա։ յորոց մի էր և Բէէլ· յորում կանգնեաց Մանասէ 'ի յանկիւնս տան Տեառն սեղան ամենայն զօրութեանց երկնից· այսինքն մոլորականաց· 4 Թագ· ԻԱ· 5։ Պարձել Երուսաղէմ կոչէ զբաբելոն, որ էր քաղաք չաստուածոց· վասն և հրեշտակքն ասացին· բժշկեցաք զբաբելոն և նա ոչ բժշկեցաւ· Թողցուք զնա և գնասցուք։ Երեմիայ· ԾԱ· 9։

✲ (Սեկտոր ճոխացեալ տաճարաւն հեթանոսաց։)

Բաղդատ նմանեցուցանէ զինքն Ռոբովամու որդւոյն Նաբատայ· որ զոսկեղէն երինջսն կանգնեաց 'ի Դան և 'ի Բեթէլ· 3 Թագ· ԺԲ· 28։ Նա Թէ (ասէ) զոսկեղէն երինջսն կանգնեաց 'ի վերայ լերանց, ես 'ի սրտի իմում զկուռս հեթանոսութեան։ Պարձել նշմարէ 'ի բանն Երեմիայ· Գ· 11 ուր ասաց Քրիստոս· արդարացոյց զանձն ապստամբութիւն Իսրայէլի, առաւել քան ուխտազանցութիւն Յուդայ։ և պատճառն էր, քան զի Ռոբովամ որդին Նաբատայ միայն զերկու երինջս կանգնեաց, և Նոքօք բաւական արարին տասն ցեղքն· իսկ Յուդայեանքն և Բէն-

Նիամինեանքն՝ 'ի ներքոյ ամծառոց և յերանց
պուրակէին ը կուռս · որպէս ասէ Երեմ · ա · 9 :
և ես (ասէ) 'ի ներքոյ Ձեռաց ՏԻՑ պաշտութեն
զկուռս հալածեալ և մոլութեն պաշտեմն
յայնց կուռքերից զինչ մնացել յափշտակելով :
✻ Կշտամբելով գետ զոն զծովս :) Եւ յայտ զոր
ասէ Եսայ · ծգ 4 յամօթ լեր սիդոն՝ ասէ
ծով : զի սուր և սիդոն մերձակայք են միմեանց
և որ առ մեզ ծովս ասի , առ լաթինս սիդոն
գրի միշտ : որպէս յայտ է Երեմ · խէ · 4 : որ առ
մեզ ծուր գրեալ է , և առ լաթինս՝ սիտոն : որ
և նոյն տեղւոյ վկայութիւն չէ 'ի դէպ բանի
Մէրյս , այլ՝ Եսայեանս : յարմարի այսմ և բա
նըն Եզեկ · իը · 22 , ուրանօր ծայդան ա
նուամբ յանդիմանէ ՏԻՑ զծուր՝ ասելով ,
այսպէս ասէ Տէր , ահաւասիկ ես 'ի վերայ քոյ ծայ
դան , և փառաւորեցայց ես 'ի քեզ · և ծանիցես
թէ ես եմ Տէր յառնել իմ 'ի քեզ դատաս
տան և այլն : նկատէ և 'ի բանն Քսի , Մատ ,
ժա · 21 · ուր ասաց Քս , զի եթէ 'ի տիւ
րոս և 'ի սիդոն եղեալ էին զօրութիւնք որք 'ի
քեզ եղեն , վաղվաղակի խորգով ապաշխա
րեալ էին : և ահա առիս (ասէ) բազմ և անդր
զօրութիւք եղեն 'ի քեն , և քան զսիդոնացիսն
վատթարագոյն գտայ : և զի սիդոնացիքն
քանանացիք էին · և Քս զքանանացի կինն
շուն կոչեաց , և նա ոչ դժուարացաւ , այլ
փշրանաց սեղանոյն ցանկացաւ Մատ · ժե · 1 :
և ես (ասէ) զշուրջ սեղանոյ տն վայելեցի բազ
բարութեանս · և յուդայանման մատնիչ եղէ
Տեառն իմոյ : և հետադայն նոյն է , զի ծուր
և ծայդան՝ է անուն երկրին սիդոնի , որ այժմ
ծուրայ՝ ասի սուր · և ծայդանու՝ սայտա :

✻ Սորրութեանց զոն զգալիլեա :)

Զի գալիլիա՝ այնքան յանարգութեան և 'ի նուա
ստութեան էր 'ի մէջ հրէից , մինչ զի ասէին ,
զմարդ իմն է 'ի գալիլեէ բարւոյ իմիք լինել ·
և առ Նիկոդիմոս ասացին , մարգարէ 'ի գա
լիլեէ ոչ յառնէ : թէպէտ սուտ ասացին ·
ուստի Նուրացին Յօհան · է · 52 · ասէ թէ
սուտ է՝ թէ համբարար իմանան՝ թէ մարգա
րէ ոչ յառնէ 'ի գալիլեէ · քանզի ոմանք 'ի
մարգարէիցն անդ ծնան , որպէս Եղիսէ · և Յօ
բիաս · և Դեբորա · լինի թէ այլ քես : և թէ
յատկապէս վասն Քսի մեսիային իմանային՝ այն
և սուտ էր · զի Եսայի · ժա · ասէ թէ ելցէ
նազովրեցի յարմատոյ անտի :

✻ Եւ Ներելով զոն զանհաւատն նեփթաղիմայ)

Որ այժմ ասի սփաթ : Եւ դժ՝ ներման ոչ
արժանացաւ կամաւոյաղավ , զի զայնքան հը
բաշս արար Քս անդ · և զայնքան Ծայես
բանս նորա քարոզեաց · և նոքա յամառեալք ոչ
հաւատացին · վասն Քս ասաց , մի մինչև յեր
կինս բարձրացիս , այլ մինչև 'ի դժոխս իջցես :
և ես (ասէ) նոյնման խստասիրտ գտայ · վասն
ներողութե չեմ արժանի : Մատ · ժա · 23 :
Թարգմանի՝ անդաստան գեղեցիկ · բայց ոչ
գեղացաւ անհաւատութե · որ գեղեցկացուցեր՝
քարոզութե · և հրաշիւքն Քսի երևելի եղեն :

✻ Գորազինեցելոյ զոն շորազին · բեդսայի
ցելոյ զոն զբեդսայիդա :)

Ը այնմ վայ քեզ քորազին և բեդսայ՝ և այլն :

✻ Եւ Ալեւորելոյ ծաղկեցելոյ ալեօք եփրեմ :)

Եսա այնմ Ովսէ · է · 9 : ծաղկեցան նր ալիք
և նա ոչ զգաց : խեր թէ՝ սպիտակեցան ալիքն
ազգին Եփրեմի , և նա ոչ զգաց · և ոչ ամա
չեաց յսպիտակացել ալեացն · այլ ունէր 'ի
ներքոյ սպիտակ ալեացն զմիտս մանկականս ·
որպէս և Ոսկեբ · ն Ճառին ասէ , ամօթոյ գործ
է և առականաց , 'ի վերայ մեծանալ , և ալեօքն
ծաղկել , և 'ի ներքոյ զմանկութեայ միտս ու
նիցի : և թէ ոք 'ի մանկութեայ թշնամանեցէ
զայնպիսին , նա վաղվաղակի զալիսն 'ի մէջ
բերէ , դու ոչ ակնածես յալեացդ որ ծերն
ես , զի՞արդ զմանկութիւն ստիպես ակնածել ,
և մեծարանս դնել քեզ : ուստի 'ի վերայ շնոր
ծեր՝ Աղեքսանդրոսի՝ ասէ Սուրբ նա կեղա
ռեցին , ծեր ալեօք և շուն մորուօք , շուշա
նայ ծերոյն աւելի · գէմ այդ չէ գործ մար
դարէի , կամ բնաւ իսկ տեսանողի թէ ըզ
Ղուսին 'ի մէջ բերես , կամ զառակ կնոջն
Ովսէի · նոցայն յօրինակ բանի , վասն յանց
մանն առնին իւրի : այլ Սէս Գրիգոր՝ թէպէտ
հասակաւն ոչ էր ծեր · այլ երեսնամեայ ·
այլ զի մեղօք զինքն ծերացեալ համարե
լով այնպէս ասէր : այսպէս Սբ հայրն Սա
կար՝ վիճելով ընդ սատանայի ասէր , 'ի բաց ել
յինէն ով սատանայ , ծերացար ընդ իս 'ի ման
կութե իմմէ : 'ի վերայ բանին Ովսէի՝ ասէ Սբն
Սերոբէս լամբրոնացի · քանզի մինչ մանուկ
էր իւր սիրեաց զնա Ծ , և կոչեաց յանուն
որդւոյ , և ճանաչանդ արար նմա զհեթանոսս
վս ուղղութե իւրոյ · իսկ յորժամ ճնացաւ
ժամանակաւ և պարտ էր աւելի զգաստանալ
'ի սէրն Ծ · յիմարեցաւ որպէս զմանուկ չար 'ի
կռապաշտութեն , և ոչ զգաց զհասակին իւրոյ
յԱծպաշտութեն զկատարելութեն · և այլն տես անդ
յորմէ և Սրգիս շնորհալին առնէ զվկայութե ·

(Զ) Ղուկասու գլուխ [illegible])

'ի Հերուսաղէմի գտանի և այլ ինչ բառ. զի
գրեալ է, Աղբիւր աղբերաց. և ծարգիս շնորհալին
նոյնով բառիւ մեկնեալ է, թէ աղբերց նշանակէ
քաղցր. զի և աղաւնին քաղցր է 'ի տեսս և 'ի
համբոյրս, հանդարտ և ընտել մարդկան: իսկ
ազգն եփրեմեան զգոյնն միայն ունէին զաղ-
աւնւոյ. զի ինչեւան անուամբն էին, այլ
փոխանակ հանդարտութե յիմարեցեալ բնավ ան-
գամ աճեցեալ յառաջեաստանւոյն ոչ զգաստա-
նային. որպէս և է իսկ հանուն այն բարք որ բա-
զում անգամ զբոյնն աւերեալ տեսանէ և ոչ
զգաստանայ: իսկ բան Սբյ է 'ի Յովսէէ ա-
ռեալ. Է. 11: ուր ասի, եփրեմ իբրև զաղաւ-
նի անմիտ' որոյ ոչ իցէ սիրտ. յեգիպտոս խրա-
խուսէին, և առ ասորեստանեայս գնացին:
իբր թէ այնպէս անմիտ էր ազգն Եփրեմի, որ
մինչ յեգիպտոս ձեռն ձգել կամէր յասորես-
տանւոյն զգերելն իւր ոչ գիտէր, և ոչ իմա-
նայր: Նկատ որպէս և մեկնէ Սբն Կիւրեղ լամբ"
տմ թռչուն յորժամ բառնայ ըզ զձագս նր,
ոչ ևս յաճելու 'ի նոյն բոյն ածել ձագս,
բայց յաղաւնւոյ: նոյնպէս և եփրեմեան տունն
բազմիցս աւերեցան 'ի թագաւորացն ասո-
րեստանեայց և նք յառաջաստանւոյն ոչ եր-
կեան: կմ զի աղաւնին միայն հաղորդի տմ
թռչնոց: կմ զի աղաւնին յերկրէ յերկիր գիր
տանիլ սովորի, այսպէս 'ի թշնամեաց խմացեալ
նետահարեալ մեռանի. որպէս և ասաց Ծ. ուր
և երթայցեն արկից 'ի վր նց զվարմ իմ, և իբրև
զթռչունս երկնից իջուցից զնս: այսպէս եփրե-
մեան ազգն մատնելով զխորհուրդն ասորւոց
առ եգիպտացիս, յասորւոց նետահարեալ սպա-
նանէր. որ այսպէս յանդիմանէր Ովսէէ զն
զեկիւս, թէ յուսացեալ ես 'ի Ջախջախ եգիպ-
տացին. յոր թէ յենուցու ոք, խորտակի և ծ
ձեռս երանէ: որ այսպէս է տմ յուսացող 'ի
մարդկային զօրութիւն և անփոյթ առնողն զխնա-
մոցն Ա. որպէս ասէ և Սբն Կիւրեղ լամբրո".
թէ եփրեմ անփոյթ արար զդարձն իւր առ
Ած. վասն որոյ գտեալ զնա ամայի 'ի նախախնա-
մութեն, վս յառնեն թշնամիք և ապականեն
խաղաղ. մի վիշապն յեգիպտոսէ. և միւսն 'ի
բաբելոնէ. և առնուն բաժանեն յափշտա-
կեալ զնս յոմս իւրեանց. ոչ առ 'ի սնուցանել
այլ ի սպանդեցուցանել: այսպէս և ես յիմարե-
ցեալ աղաւնիս (ասէ) խրատեալ բազմիցս և
ոչ զգաստացեալ, և զխորհուրդս Այ թշնամեաց
նր մատնելով' յԱյ նետահարեալ մեռանիմ,

աճեսանիմ աղաւնւոյ մի հեզութեն, այլ մի յի-
մարութեանն միայն:

* 'Ի Կորնթոսին [illegible])

Իսկ թէ 'ի Տրէ և յառաքելոց և 'ի Սբ Հարցն
չէին առեալ ծնայ, բայց զօձս և զիժս թու-
նաւորս մեղաց յառաջ բերէի: այսպէս Կիրա-
կոս ափոսկին պաշտն' մինչ ասաց ընդ իշխա-
նին թէ' դու ես խօսող այլ ոչ 'ի հաւէ. և
նա ասաց, և դու ես առեալ, այլ ոչ 'ի տանէն
Յուդայ: բայց աստէն ոչ թէ բնաւին բա-
յառեալ օձք ծնանին, զի այն է անկարե-
լի. և այլ մ յիմ տեսկ նոյնատեսակք առա-
ջիգայլին, սակայն աստէն այլ նորէն խօսի որպէս
Պետրոս 'ի վր բանին Եսայ. Ղ. 6. ուր ասի' ա-
ռեալ ևկորիւն առեալ, և 'ի նմանէ են իժք
և կորիւնք իժից թռչունք. իբր թէ թևաւոր
օձք, որք յԵթովպիայ գտանին: իսկ Սբս Պե-
տրոս կամի ասել որպէս 'ի վեր անդր գրեցաւ.
իբր թէ յառեալ անամ հարց ծնեալ թռունք
օձ դարձայ բարուք: և Սբն Յոհան ասէ"
այսպէս մեկնէ զայս տեղիս, յիշեցուցանելովն ըզ
նախնեաց առաքինութե, առաւել հեգնէ ըզ
յետնոցն անմտութի. 'ի նմանէ ասէ ձագք քար-
բից թռուցելոց, զի կսկծեցուսցէ թէ յորպի-
առաքինի հարց և 'ի քբաջաց որպիսի ժանտք ծը-
նան: բայց կարելի է ասել թէ 'ի մեռանել առե-
ծուցն որդունք ծնեալք, մեծանալով յօձ
փոխարկեցին. որպէս և վս մեղուաց ասի յերըն-
ջուց ծնանիլ: և 'ի մեռեալ մրդոյ ուղեղէ
օձ ծնանիլ ասի. Նմինուեցն, գրքով, Ժ. Գլ"

* Կէտով [illegible])

Թշնամիքն' լցեալ ապականեալ ջրով ժամանութեն
թռչնոց. զոր առնէ Յեսայ. ԾԹ. Ե: ուր ա-
սի. զձուս քարբից ծակեցին. և ղոստայն սար-
դից անկանէին: և որ կամիցի ուտել 'ի նոցանէն
ձակեց' եբեկ և եգիտ ջուր, և 'ի նմին բորբ:
այսու օրինակաւ կամէր Մարգարէն ցու-
ցանել թէ, Հրէայքն նմանք են քարբից
ձուոց, որք առ արտաքս գեղեցիկք երե-
ին. և 'ի բեկանելն զնոսա զապականեալ
ջուրս հեղուն և զքարբ 'ի դուրս բերեն.
որք նոյն ժամայն ընդ ելանելն 'ի պատենն ըզ
մրդ և առանց զգացման ցաւոյն սպանանեն.
զոր օրինակ և կենսատ կոչեցեալ խառն նախ
սպանանէ, ապա զցաւն զգացուսցէ. և ուշկա-
պարիկն քաղցրաձայն երգելով ննջեցուցանէ
զնաւորդսն, և յետոյ եկեալ սպանանէ և 'ի
ծովն քարշէ: այսպէս և քարբի խայթուածն
զոր և կուռմնչ խոս ասէ 'ի նոյն տեղւոջ թէ,

ամենից օձից խայթմանց դեղն գտանի, բայց 'ի միոյ քարէ, որոյ ասպաբինումն դժուարին է. և թէ քարն ոչ յումեքէ յաղթի՝ բայց 'ի կնոջէ. որ միայն շօշափմամբն և կամ հայեցմամբն սպանանէ կինն զօձն. ուստի յառակս ասէին (ասէ) թէ՝ նետ քարբի է վասն կնոջն. ուրեմն ասէ թունալի է կինն՝ որ զայնքան թունալին սպանանէ: աստէն Սբ Գրիգոր ինքն զինքն նմանեցուցանէ ձուոց քարբից, ոյք արտաքոյ երևին գեղեցիկ և 'ի ներքս են լցեալ թունալի ջրով և քարբիւ. որ է Կոստանդինուպոլսոյ նշանակէ զգաղտնի թշնամին, որ այնքան ժանդամահաբեր է, զի գաղտնի և անդր քան զցաւն նեղհեղութեան այս օձս. և ոչ զինի խայթմանն երևի վէր 'ի մարմնի, այլ՝ ածէ զմահաբեր քաղցր քուն. թէպէտ ոմանք զխայտի ոջլոյն ասեն դեղ: Տարբեկնեալս՝ ցուցանէ քարբի ձուն զորոգայթն, որ մինչ ոք այլոց կազմէ, 'ի գլուխ իւր դառնայ. որպէս զգուբն զոր փորեաց 'ինքն անկցի. այսպէս մինչ Սիկոլայոս ակառանեաց թագուհոյն կամէր զՍ. Ղեւ. սանդարամետ մնկեդօնացին սպանանել. ինքն 'ի նմանէ սպանաւ. յորմէ կազմեցին զայս առակս թէ. որ այլում զչար կազմէ, իւրում իսկ լերդին կազմէ, և չար խորհուրդն՝ խորհողին յոյժ չար է: ագուաւն ըմբռնեալ զկարիճ մինչ 'ի յօդն քարշէր, թափանցեցաւ թոյնն նր 'ի նմին ագռաւուն՝ և մեռաւ: Տնդկաց մուկն՝ զմայր իւր սպանանէ, և ինքն յղանայ զձուս բայց շօշափմամբ նորին մեռանի: մի եղջերուն թաշուննն ըմբռնել զկարիճ, անցեալ տառամբ նորին զմահաբեր վէրս ընկալաւ: այսպէս է որ զառիւծն խթէ և զպիծակս գրգռէ, յորոգայթի իւրում ըմբռնի, և սրով իւրով խողխողի: այսպէս ասէր Օվիտիոս. վայ ինձ՝ կրեմ զվէրս, արարեալ յիմոցն ետից: Տաննիպալոս յաղթօղն յամի՝ վերջապէս յիւրոցն արհեստից յաղթեցաւ: Պոսքիտա գուքան հանեալ զնետն 'ի մարմնոյն իւրմէ, նովաւ զհարկանօղն իւր հարեալ մահացոյց: Սմուէլոս նախ գոլով դարբին, և բռնութ եղեալ կայսր. յետ լինել զինուցն սպանաւ 'ի միոյ զինուորէ: որոգայթիւ իւրով կորնչի ամ որոգայթադիր. և Սբ Գրիգոր ասել կամի թէ, ահա և ես քարբից ձուոց նման իմով որոգայթիւ կորընչիմ. և կամ զի տեսանեմ գեղեցիկ և առաքինի կրօնաւոր երևիմ, և 'ի ներքս լցեալ եմ ժանտութ մահաբեր: այսպէս նմանեալ տայր պիղծն նեստորիոս բանից Սբն Կիւրղի թէ

Գլուխ Ի.

զձուս քարբից ծակեցին. և զոստայն սարդից անկանեն Եսայ. ԾԹ. 5:

(❋ Պատմէր վերջին հարցմունքն Երուսաղէմի քաղ բանին մեկնոն :)

Ներքին հարցմանս ՚զի՝ կոչէ զկատարումն հրէից 'ի Տիտոսէ. և զոր 'ի վր Տաճարին ասաց Փրկիչն թէ, մի մնասցէ քար 'ի վր քարի որ ոչ քակտեսցի: յայսմանէ անդուստ ոմանք ասեն թէ, ոչ ևս պատուհելի ինչ մնաց յՐեմ. զի Տորիանոս կայսրն առեալ զՐեմ, քակեաց զորս մնացեալք էին 'ի Տիտոսէ և 'ի Սեսպիանոսէ և զհրեայսն ցրուեաց յՐեմէ, և հրամայեաց անդ բնակել միայն քրիստոնէից. և զի կոչել այս Տորիանոս Աէլի, վասն որոյ ասէր զՍաղեմ և վերստին շինել. կոչեաց զնա յիւր անունն Աէլիուպոլիս. սակայն որ ասէ գիտզանագիրքն կայսերաց և Բաղանդիպոսցն Տուոմայ, նոյն 'ի նոյն գրքոջ. Է. հատուածի կայսերաց. ԺԴ. կայսերն պատմէ. Ճ. հերքն ասէ թէ, որ և փոխել զնր քրքն յայլում տեղւոջ. վն զի 'ի հինն Երեմ տեղի չարչրն նորա Քի արտաքոյ քղքին էր. իսկ 'ի նորս Երեմ զոր Տորիանոս շինել պարսպեաց. տեղի չարչարնացն Քի Սբ Գողգոթայն և սբ Գերեզմանն 'ի մէջ քաղաքին գոյ: իսկ առ այն թէ, ոչ մնասցէ քար 'ի քարի վր, ասացաւ վն տաճրին: այլ թէ ըզբանն Ղուկաս ոք առարկեսցէ, տեսել զքաղաքն եկեաց 'ի վր նր և ասաց. եկեսցեն ժամկ յորում շրջապատեսցեն զքեզ թշնամիք քո պատնէշ. և թէ՝ ոչ թողուցուն զքար 'ի վր քարի յամի 'ի քեզ. և այլն, Ասելի է թէ, և այն ևս ոչ դիպեցաւ տեղւոյ չարչարնացն Քի, այլ հնոյ քղքին: Որիճէն ասէ ոք. գրեալ է 'ի գրքերգրոցն կայսերաց թէ, 'ի ժամկս Հերակլի, գնաց պարսից թագաւորն Խոսրով յՐեմ և առեալ զնա այրեաց զքղքն. և զպատուական ծառ ուխտատեղիսն այրեց և յառաւեց. ԾԹ երր կայսերց պատմէ: ասեմ թէ, ոչ զտուն Տեառն Յարութեան զշինեալն 'ի մեծ թագուհոյն Հեղինեայ. զի դեռևս նորին շինեալն է. այլ զարտաքին գաւիթն Տեառն Յարութեան միայ. և զտն Համբարձման Տաճարն 'ի լեառն Ձիթենեաց: և զտն Աստուածածնի գեղեցիկ Եկեղեցին մերձ տեառն յարութեան: թէպէտ Քրիստոս 'ի փառս իւր, և 'ի միւս թարեն քրիստոնէից պահեաց զտն յարութեան տաճարն զոր և ոչ մեծ թշնամին Քի պիղծն յուլիանոս կարաց քակել. այլ միայն զափրոդիտեայ պատկերն կանգնեաց 'ի վր Քի գերեզմանին: որ թէպէտ բազմիցս է պատահեալ փայելչութեան Երեմնայ անշքեալ. ծէ տեղին. ըստ Սալոմոն

Սաղմոս · Փ · գերբոշ Ամէ Տեղեաց սրտամտուէ · Ճ · գլ" : սակայն ոչ երբեք բոլոր հիմանն և չինոււ ածոյն եղև միտս : և յորժ ուրեք դատանի թէ զկնի Հեղինեայ Թագուհւոյն՝ զայն մեծ և հոյակապ որ տաճարն այլ ոք չինեալ իցէ անդ : ուրեմն նոյն Արքայնամբ Տեղին · և արդեն զնոյն զօրութե և զմեծութե ունի , զոր ունէր 'ի ժամնկս չարչարնացն Քրի Թէպէտ անարժանից ոչ այնք երևի զօրութիւն նորին և շնորհն :

* Տողումբքս ծերծեալ հասեալ ի նործանուցն :)

Բստ այսմ, երկիր ձեր աւերակ · քղքք ձեր հրձիգ · Եսայ · Ա · 7 : այլ ոչ տաղաւարն մերժել ասի՝ մինչ անբնակ լինի · այսպ և ես (ասէ) մեղօք զկ՞ծ զբնակիչն 'ի հոգին իմ՝ մերժեցի , և ի կործանիլ մերձեցայ : կմ թէ առ այն ակնարկէ զոր Պաւլոս ասէ · 'ի մերժելն դրդուեցայ , և եղէ մերձ 'ի գլորիլ : և Ե Եսայեայ , լքել թողցի դուստր սիոնի · զի լքել և թողել տաղաւարքն՝ յանձրևոյ և 'ի չարժմանց խարխլին վասն ոչ ունելոյ զնորնամարկոզս :

